նաց. մինչ զի մերձ լինիլ հանել աղմուկ չխոթի և խռովութեան։ Եւ յերկրորդելն Հայոց քննել զտեղիս և որոշել, սրտմտեալ Դատաւորին բարկութեամբ ել անտի եւ եմուտ յեկեղեցին Ցունաց, առեալ ընդ իւր զԲաղաքապետն և զհամախոհս իւր։ Սակայն գործակալքն ակնարկէին Հայոց լռել և համբերել, և ինքեանք չափեցին ըզյայտնի տեղիս նոցա և նշանակէին զնոր չինեալսն և զնորոգեալսն 'ի բանից Ցունաց, ուր էր և Թարգմանն Լատինաց. Հայք յառաջագոյն պատրաստեալ էին անդ զպատկերս, զի ակն ունէին դնել զնոսա յիւրաքանչիւր տեղիս զկնի քննութեան. տեսեալ զնոսա Դատաւորին՝ մատնութեամբ Ցունաց և քաղաքապետին՝ զայրացաւ յոյժ, եւ կոչեալ զոմանս 'ի Հայոց, սկսաւ յանդիմանել զնոսա բարկութեամբ առաջի բազմութեան, զիա՞րդ համարձակեցայք ասէ մուծանել զնոսա 'ի ներքս, և ո՛վ ետ ձեզ հրաման, մի և մի երբէք լիցի ձեզ յուսալ՝ թէ թողում կախել ըզկուռս ձեր և պաշտել զնոսա աստ, զի ես Միւսլիւման եմ գիտեմ զօրէնս իմ եւ երկնչիմ յօրինաց։ Հայք ասեն՝ պատրաստեցաք զայնս կախել ըստ հրամանի ձերում. զի սովորութիւն է քրիստոնէից դնել պատկերս յեկեղեցիս, և համարձակ պաշտել զօրէնս, որոց հրամայեալ են Թագաւորք և Դատաւորք, և դու զիա՞րդ արգելուս զմեզ յօրինաց մերոց։

Դատաւորն աղաղակէր՝ ես յաւուրս իմ չթողում կախել զպատկերս, այլ նոքա ամենեքին որք յառաջ քան զիս եկին և հրաման ետուն, ոչ են Իսլամք և օրէնսգէտ. զի եթէ Արքայն իսկ հրամայեսցէ, այլ ես ոչ թողում։ Հայք ասեն. արգելումդ վասն ամենա՞յն քրիստոնէից է, թէ միայն Հայոց, Դատաւորն. ընդէ՞ր եւ զայլս 'ի մէջ բերէք, զձեզ այժմ այսպէս գտի՝ և այսպէս թողում, Հայք. ո՞չ-ապաքէն հաւատակիցք մեր ամենեքեան կախեալ են, նոյնպէս եւ մեք 'ի տեղիս տեղիս. այլ զոմանս ոչ կարացաք կախել զկնի չինութեան, այժմ տեղիքն մեր որոշեցան և պատկերքն պատրաստք։ Այլ նա եւս քան զեւս զայրացեալ սկսաւ զանպատեհս խօսիլ և նախատել զազգն՝ եւ այսպէս անկատար թողեալ զքննութիւնն մեկնեցան անտի։